



ԽՆԴՈՒՔ

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԽՆԴԱՆՔ:

Երբ հաճելի կատակ մը կը պատմուի, երբեմն մենք երկուքի կը ծալուինք: Այս խնդալիք լուրը փոխանցելու համար զգայարանները լուր մը կը դրկեն խնդուքի կեդրոնը: Ան զետեղուած է մեր ուղեղին աջ բաժինին մէջ, որ շարժումի

կը մղէ մեր ամբողջ մարմինը՝ դէմքը, վանդակը, փորի մկանները, ձեռքերն ու ոտքերը: Մօտաւորապէս 400 մկաններ կ'աշխատին, երբ կը խնդանք: Կարգ մը մկաններ ալ կը թուլան, ուրիշներ կը կծկուին:

Շնչառութիւնը կտրտուած կը դառնայ եւ արտաշնչուած օդը ձայնալարերը կը թրթռացնէ: Իսկ մենք «հա», «հի», «հօ» ձայներ կ'արձակենք:

ԻՆՉՈՒՒ ԿԸ ԽՆԴԱՆՔ:

Լաւ խնդուք մը ջիղերը կը թուլցնէ: Երբ կը խնդանք, մեր սրտին տրոփումները կը հաւասարակշռուին:

Մեր ներքին գործարանները կը ցնցուին: Իբրեւ արդիւնք մենք աւելի լաւ կը մարսենք: Մեր ուղեղն ալ իր կարգին, յատուկ քիմիական նիւթ մը կ'արտադրէ, որ ցաւի եւ ընկճուածութեան դէմ է: Ան սքանչելի ազդեցութիւն կ'ունենայ մեր վրայ:

ԵՐԲ ԿԸ ԽՆԴԱՆՔ:

1.- Երբ մէկը մեզ խտրտացնէ:

2.- Երբ լսենք ծիծաղելի պատմութիւն մը:


Այսպիսով մեր զգայարանները կը մասնակցին խնդուքին:

- Ի՞նչ կը պատահի երբ ընկերներուդ առջեւ որեւէ պատճառով խնդաս:

- Անոնք ալ անզգալաբար կը խնդան: Խնդալու հրահանգը կու գայ թէ՛ գիտակից ուղեղէն, թէ՛ ալ անգիտակից ուղեղէն: Այս պատճառով ալ ան երբեմն անդեկավարելի է եւ վարակիչ:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄՈՒՆԻ ԱՇՈՏԵՆ-ՇԱՀԻՆԵՆԻ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՇՈՇԵՆՆ




Մկնիկը շա՛տ անօթի է:
Կրնա՞ս օգնել իրեն
հասնելու պանիրին:



Ձախ կողմի եռանկյունները իրենց ճիշդ տեղերը
դի՛ր, համապատասխան գումարումները ընելով:

Գտի՛ր երկու նոյնանման ժամացույցները:



ԾԻԾՍՂ

Տիկին մը հեռաձայնով ամուսինին կ'ըսէ.
- Բժիշկ մը գտի՛ր եւ անմիջապէս տուն
եկո՛ւր: Մեր երեխան տասը ոսկի կլլեց:
- Ի՞նչ կ'ըսես,- կը պատասխանէ ամուսինը,-
տասը ոսկիի համար կ'արժէ՞ հազար ոսկի
այցեգին վճարել բժիշկին:

$3 + 2 = 5$
 $5 - 2 = 3$
 $5 - 3 = 2$
 $3 + 2 = 5$
 $2 + 3 = 5$

ԿՐԻԱՆ

Կար ու չկար, կրիայ մը կար: Իսկ դուն գիտե՞ս, որ կրիաները կը քալեն. տո՛ւպ... տո՛ւպ... տո՛ւպ... տո՛ւպ...

Իսկ միւս կենդանիները կը վազեն տո՛ւպ-տո՛ւպ-տո՛ւպ-տո՛ւպ-տո՛ւպ-տո՛ւպ:

Մինչեւ կրիան հասնի գետակին մօտ, միւս կենդանիները արդէն լողացած եւ ետ դարձած կ'ըլլան:

Փոքրիկ կրիան վստահ որ կը նեղանար իր դանդաղ քայլերէն, այդ պատճառով ալ ընկերները կ'որոշեն հեծանիւ մը նուիրել անոր:

- Նայէ՛, - կ'ըսեն անոնք կրիային, - Ի՛նչ օգտակար առարկայ է: Ամէ՛ն տեղ կրնաս քշելով երթալ: Նստե՛ եւ քշէ՛:

Ընկերները կը շալկեն կրիան եւ կը նստեցնեն հեծանիւին վրայ: Կրիան մէ՛կ անգամէն կ'իյնայ:

- Այս հեծանիւը չ'ուզեր գիս, - կու լայ ան:

Կենդանիները որքա՛ն կը փորձեն համոզել զինք, որքա՛ն կը խնդրեն որ կրկին նստի եւ քշէ զայն, բայց ան միտքը չի փոխեր:

- Կը վախնամ: Չսիրեցի հեծանիւը: Ղեկը զիս չի լսեր: Անիւները չեն դառնար եւ յանկարծ կը փախչին ոտքերուս տակէն: Չեղա՛ւ: Չե՛մ ուզեր:

- Ինչո՞ւ այսքան շուտ որոշում կ'առնես, - կը բարկանայ արջը, - մենք արջերս, որ այսքա՛ն



խոշոր ենք, կրկեսներուն մէջ հեծանիւներ կը քշենք: Դուն ալ, փորձէ՛ կամա՛ց-կամա՛ց ընկերանալ անոր:

Կրիան կը մօտենայ հեծանիւին եւ կ'ըսէ.

- Ներողութի՛ւն: Դուն լաւ ընկեր ես: Եկո՛ւր, անգամ մըն ալ փորձենք:

Սկիզբը կրիան կը քշէ կէս մէթր ճամբայ, ետքը՝ մէկ մէթր, իսկ յետոյ՝ մինչեւ տան ծայրը, վերջն ալ՝ մինչեւ փողոցին վերջը:

Հիմա արդէն կրիային ընկերները երկար չեն սպասեր զինք, երբ պիտի հանդիպին իրարու: Ան ընկերներէն առաջ կը հասնի, ուր որ պետք է:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Սկիզբը սորվէ՛ երեք անիւով հեծանիւ քշել, ապա՝ չորս անիւով: Յետոյ խնդրէ՛ ծնողներէդ քառանիւ հեծանիւին յետսամասի փոքրիկ անիւները վեր բարձրացնել՝ աւելի լաւ քշելու համար:

Աշխատէ՛ չկորսնցնել հաւասարակշռութիւնդ եւ կանգ չառնել:

Եթէ յոգնիս՝ հանգստացի՛ր ու կրկին սկսէ՛: Յիշէ՛, թէ ամէն փորձէ՛ ետք աւելի կը մօտենաս ուզած արդիւնքիդ, թէկուզ փոքր քայլերով:



ԱՆՐԱԲԱՏԱԼԻ՛, ԲԱՅՑ ԻՐԱՒ...



- 1.- Ձուկի 130 տեսակներ կան, որոնք կրնան ապրիլ նաեւ ցամաքի վրայ:
- 2.- Մէկ ամսուան ընթացքին պատահած երկրորդ նոր լուսինը կը կոչուի սել լուսին: Սել լուսինները մօտաւորապէս 32 ամիս անգամ մը կը յայտնուին:
- 3.- Կարգ մը մծեղներ կը նախընտրեն ծծել կովուն արիւնը, մարդուն արիւնէն:
- 4.- Ջրախոտի տեսակ մը կայ, որ ինքզինք կ'ուտէ երբ ուտելիքը պակսի:
- 5.- Միացեալ Նահանգներու եւ Քանադայի միջեւ գտնուող սահմանը կ'անցնի գրադարանի մը մէջտեղէն:
- 6.- Աւտրալիոյ ցամաքամասը մօտաւորապէս 1.5 մէթր դէպի հիւսիս սահած է վերջին 22 տարիներուն ընթացքին:
- 7.- Առաջին միջատները, որոնք անջրպետ դրկուեցան պտուղի մանր ճանճերն էին:
- 8.- Շերեփուկները կրնան ջուրին մէջ երկու տարի ապրիլ:
- 9.- Այծերը մարդոց հետ կը հաղորդակցին՝ անոնց աչքերուն մէջ նայելով:
- 10.- Կարգ մը թռչուններ տակաւին հաւկիթներուն մէջ գտնուող իրենց ձագերուն հետ կը խօսին:
- 11.- Գիտնականները նախնական կարիճի մը մնացորդները գտած են, որուն մեծութիւնը մարդու հասակին կը հասնի:

